

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2**

2013 թ.նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի ընտրություն:

2.Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ընտրություն:

3.Գավառի պետական համալսարանի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչի ընտրություն:

4.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի, տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնների համար հայտարարվել էր մրցույթ՝ ըստ ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների ընթացակարգերի: Մրցույթին մասնակցելու համար ստացվել էին Թ.Ասոյանի /բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար/, Վ.Գրիգորյանի / հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի համար/, Հ.Զաքոյանի /կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնի համար/ դիմումները: Ընդունված կարգի համաձայն՝ մրցույթի մասնակիցները ներկայացրին զարգացման հնգամյա հայեցակարգերը: Այնուհետև ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Ս.Ամիրխանյան, Ա. Մայիլյան: Անցկացվեց փակ /զաղտնի/ քվեարկություն: Քվեարկության արդյունքները ներկայացրեց Հ. Ղաջոյանը.

Թ.Ասոյան – կողմ՝ 28, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Վ.Գրիգորյան- կողմ՝ 28, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հ.Զաքոյան – կողմ՝ 28, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝

Որոշեցին՝

1. Հաստատել բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքները:

2. Հաստատել բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքները:

3. Հաստատել տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնի համար անցկացված քվեարկության արդյունքները:

4. ԳՊՀ խորհրդի կազմում կատարել փոփոխություն. ԳՊՀ «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի նախկին պրոֆեսոր Իշխան Երեմի Խլղաթյանի փոխարեն խորհրդի կազմում ընդգրկել բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թաթուլ Արտիկի Ասոյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան